«Ս.ՍԱՀԱԿ - Ս.ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ «ՋԱՐԹՈՆՔ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՊԱՐՈՒՅՐ ԱՂԲԱՇՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ հանդիսություն, որի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբապատառ Կոնդակով ՌԱԿ լիբանանյան մասնաճյուղի «Ջարթոնք» պաշտոնաթերթի խմբագիր Պարույր Աղբաշյանին շնորհվեց Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը՝ գրականն, մանկավարժական և լրագրողական գործունեության 30-ամյա տարեդարձի առիթով:

Հանդիսության սկզբին տիար Պարույր Աղբաշյանի կյանքին և գործունեությանն անդրադարձավ «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը՝ շեշտելով հատկապես Պարույր Աղբաշյանի անսակարկ ծառայությունն ու նվիրումը հանդեպ Ս. Էջմիածինն ու Մայր Աթոռի գահակալները:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգակցության ներքո հանդիսությունների դահլիճ բերվեց Հայրապետական Սրբապատառ Կոնդակը, որն ընթերցեց Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Աղամյանը:

Ստեղծագործական Ձեր բարեջան գործունեության շնորհիվ այսօր ընթերցողի սեղանի վրա են Ձեր հեղինակած բազմաթիվ գրքերը, հոդվածներն ու հրապարակումները, որոնք բերել են Ձեզ հայրենասեր մտավորականի և ազգային գործչի բարի համբավ ու ճանաչում: ...Ձեր կյանքում Դուք առանձնակի տեղ եք հատկացրել նաև սփյուռքահայ մատաղ սերնդի հայեցի կրթությանն ու դաստիարակությանը: Ստանձնելով վարչական զանազան հանձնառություններ Սփյուռքի Ազգային կրթօջախներում և դասավանդելով հայագիտական առարկաներ՝ Դուք ոչ միայն գիտելիք եք փոխանցել Ձեր սաներին, այլև Ձեր հոգու սերը՝ հոգևոր և ազգային մեր արժեքների հանդեպ, որպեսզի երիտասարդ հայորդիները կյանք մտնեն հարուստ գիտելիքներով, ազգային մեր կյանքի շինությանը ծառայություն բերելու պատրաստակամությամբ»,- ասվում է Հայրապետական կոնդակում:

Այնուհետև իր սրտի խոսքն ասաց Պարույր Աղբաշյանը. «Իսկապես ինձ համար բացառիկ և եզակի օր է, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ արժանացա այս բարձրագույն պատվին: Վստահ եմ, որ այն նոր լիցք պիտի դառնա, որպեսզի ավելի ամուր կառչենք մեր արմատներին, ազգին ու հայրենիքին»:

Վերջում ներկաներին Հայրապետական օրհնության իր խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը. «Հայրապետիս համար մեծ ուրախություն է այս պահին, քանզի մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում մի անձի, ով տասնյակ տարիների ծառայություն է մատուցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, մեր ազգային կյանքին ու հայրենիքին»,- նշեց Նորին Սրբությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժեբրայիլ Ժեարան, մշակույթի և գիտության մշակներ և այլ հյուրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՏԱԼԻՆԱՀԱՅԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ
ՄԵՀԱՄՈՍ ՀԱՅԱՐԱՏԵՍԸ ՊԱՐՈՒՆ ԷՐ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՄՈՏԵԿԻ ՏԵՍՈՒԹՅԱՆԻ ՄԵՋ ԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՈ

Академия наук Армянской ССР